2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարություն

Միջոցառում 25.

Մշակել «Կրոնական կազմակերպությունների մասին» նոր օրենքի նախագիծ

Ֆինանսավորման աղբյուրը՝ լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը հաշվետու ժամանակաշրջանում ներկայացվել է ՀՀ կառավարություն: Հարկ է նշել, որ Նախագիծը 2017թ. հունիսի 1-ին դրվել է հանրային քննարկման՝ e-draft.am կայքում[1]: Միաժամանակ, պետք է ընդգծել, որ Նախագծի մշակման շրջանակներում կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ՝ կրոնական կազմակերպությունների և շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Արդյունքում, վերջիններիս կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ և դիտողություններ նախագծի տեքստի վերաբերյալ:

Ներկայումս Նախագիծը լրամշակվում է՝ հիմք ընդունելով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից ներկայացված համատեղ կարծիքը: Լրամշակումը ենթադրում է կատարել Նախագծերի էական փոփոխություններ, ինչպես նաև իրականացնել հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:

[1] https://www.e-draft.am/projects/246

Միջոցառում 43.

Իրականացնել վերապատրաստում անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված պաշտոնատար անձանց համար:

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հաշվետվություն

Անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված պաշտոնատար անձանց վերապատրաստման ուղղությամբ 2018թ-ի մայիսի 21-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է 5-օրյա դասընթաց պրոբացիայի ծառայողների համար: Ընդհանուր առմամբ, վերապատրաստմանը մասնակցել են 44 ծառայողներ:

Միջոցառում 54.

Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման ողջամիտ ժամկետ

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

«Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով բողոքարկման համար նախատեսվում է 10-օրյա ժամկետ: Հաշվի առնելով գործնական դժվարությունները, որոնք առաջանում են սեփականատիրոջ համար իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս՝ անհրաժեշտ է այնպիսի ժամկետ սահմանել, որը հնարավորություն կստեղծի սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ

գույքային իրավունքներ ունեցող անձանց արդյունավետորեն իրացնել իրենց բողոքարկման իրավունքը:

Ելնելով վերոգրյալից՝ սեփականության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության իրավական հիմքերն ամրապնդելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Նախագծով հանրային գերակա շահ ճանաչված սեփականության նկարագրության արձանագրության բողոքարկման համար նախատեսվել է ***մեկամսյա ժամկետ:***

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ է ուղարկվել 2018 թվականի ապրիլի 9-ին և ընդունվել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 19-ի նիստում: Այժմ նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը[2]:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Միջոցառում 36.

Ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների և ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման արդյունավետ համակարգ:

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հաշվետվություն

1. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող թվով 35 ծրագրի՝

ա. ՄԳ-ի գործընթացի շրջանակում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան տվյալների հավաքագրում

[2] http://parliament.am/draft_history.php?id=9860

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրման գործընթացի շրջանակում 2017թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 179-Ա/1 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մշտադիտարկման և գնահատման 2018 թվականի տարեկան ծրագիրը», համաձայն որի սկսվել են ՄԳ-ի գործընթացի շրջանակում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան տվյալների հավաքագրման, ինչպես նաև նշված ծրագրերի շահառուների կարծիքի ուսումնասիրության աշխատանքները:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամք և սպասարկում իրականացնող 22 ՊՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների մշտադիտարկում և գնահատում

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Սոցիալական Պաշտպանության Վարչարարության 2-րդ Ծրագրի շրջանակում աջակցող կազմակերպության կողմից մշակվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամք և սպասարկում իրականացնող 22 ՊՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների ՄԳ իրականացման գործիքակազմը՝ տեղեկանքները, անձնագրերը և ցուցանիշները: Սահմանված պարբերականությամբ մշտադիտարկվել են ՊՈԱԿ-ների գործունեությունը, հավաքագրվել են ՊՈԱԿ-ների ՄԳ-ի գործընթացի շրջանակում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան տվյալները, իրականացվել են այդ տվյալների, ինչպես նաև շահառուների կարծիքի ուսումնասիրություն: Արդյունքում կազմվել է ամփոփ հաշվետվություն:

3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացի մշտադիտարկում և գնահատում

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ՀՀ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալակայան հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվող «Ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման

գործընթացի ՄԳ-ի շրջանակներում մշակվել է ՄԳ իրականացման գործիքակազմը՝ տեղեկանքը, անձնագիրը, ցուցանիշները: Ձևավորվել է ծրագրում ներգրավված սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոնների ընտրանքը և համապատասխան հարցաթերթերը: Երևանում, Վարդենիսում և Չարեցավանում իրականացվել է նաև ԻՍԾ ներդրման գործընթացի մասնակցային գնահատում՝ նախապես մշակված հատուկ հարցաթերթերով և գործընթացում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Նախատեսված աշխատանքների ծավալների ընդլայմամբ և նոր գործիքների մշակման անհրաժեշտությամբ պայմանավորված դեռևս ավարտական փուլում են ՄԳ գործընթացում մշակված քանակական և որակական ցուցանիշներին համա¬պատասխան տվյալների հավաքագրման նպատակով իրականացվող դաշտային աշխատանքները, ինչպես նաև ցուցանիշների վերլուծության և հաշվետվության կազմման աշխատանքները:

Միջոցառում 44.

Բարելավել մինչև երկու տարեկան երեխայի խնամքի տրամադրման, ինչպես նաև երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ պետական նպաստների վարչարարությունը:

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ:

Հաշվետվություն

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 6-ի N 275-Ն (ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի N 976-Ն) և ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 29-ի N 1566-Ն (ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի N 977-Ն) որոշումների մեջ կատարված փոփոխություններով կարգավորվել են երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը և խնամքի նպաստը առցանց ներկայացված տվյալների հիման վրա նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները (ներառյալ՝ ՔԿԱԳ-ի հետ տեղեկատվության փոխանակության պայմաններն ու կարգը), մշակվել ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու (վերականգնելու) վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգը:

2018թ. մարտի 1-ից առցանց դիմումի հիման վրա նպաստ նշանակելու (վճարելու) համար առցանց տվյալները լրացվում են www.epension.am կայքէջի՝ «Սոցիալական մեկ պատուհան. ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն» ենթաբաժնի համապատասխան ծրագրային միջավայրում:

Միջոցառում 58

Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգա-վորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում:

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

2018թ. հունիսի 1-ի դրությամբ գործատուին տրամադրվող պետական աջակցության արդյունքում աշխատանքի է տեղավորվել աշխատաշուկայում անմրցունակ 584 անձ, այդ թվում՝ 25 հաշմանդամություն ունեցող անձ՝ ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրման, աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման և աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրման ծրագրերի միջոցով:

Միջոցառում 64

Ընդլայնել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը

Ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակում

Հաշվետվություն

Հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու նպատակով՝ պետական աջակցություն է ցուցաբերվում մի շարք կազմակերպությունների:

2007թ-ից նախարարությունը համաֆինանսավորում է «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն հասարակական կազմակերպությանը՝ «Մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ» ծրագրի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում սպասարկվում են 50 շահառու: Մատուցվող ծառայությունների նպատակն է ապահովել մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների՝ ընտանիքում ապրելու իրավունքը և սոցիալական ներառումը՝ խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրման միջոցով:

2016թ-ից պետական աջակցություն է ցուցաբերվում նաև «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությանը «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» միջոցառման իրականացման համար, որի նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների՝ համայնքում ապրելու իրավունքը, ուսուցանել նրանց կարողություններին համարժեք գիտելիքներ, զարգացնել անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունները: Ծրագիրն իրականացվում է Ստեփանավանում, սպասարկում է ամսական 60 շահառուի:

2017թ-ից նախարարությունը համաֆինանսավորում է «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնին՝ Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայություններ տրամադրելու նպատակով: Կենտրոնը սպասարկում է 80 շահառուի:

Կենտրոնում շահառուներին տրամադրվում է կրթություն, հոգեբանական և սոցիալական աջակցություն՝ կիրառելով առաջատար երկրների կողմից ընդունված թերապիաներ և մեթոդաբանություն, տարիքին բնորոշ մոտեցմամբ և հատուկ ծրագրերով մասնագիտական ուսուցում, որոնք ուղղված են աուտիզմ ունեցող

անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կյանքի որակի բարելավմանը, կիրառական բնույթի գիտելիքների և մասնագիտության ձեռքբերմանը, ինքնուրույն կյանք վարելու կարողությունների զարգացմանը և հասարակության լիարժեք անդամ դառնալուն:

2019-2021թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառվել է նոր նախաձեռնություն, համաձայն որի նախատեսվում է 2019 թվականից պետական աջակցություն ցուցաբերել «Մայրի» ՀԿ-ին: ՀԿ-ի «Բուժական մանկավարժության և սոցիալական թերապիայի կենտրոնում» սոցիալ-վերականգնողական ծառայություններ են մատուցվում 14-ից 40 տարեկան մտավոր խնդիրներ ունեցող ամսական շուրջ 40 անձի՝ ուղղված նրանց կարողությունների և անկախ կյանքի հմտությունների զարգացմանը, հասարակության կյանքում լիարժեք ներգրավմանը և սոցիալական ներառմանը:

Վերոնշյալ ծառայություններն օգնում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին զարգացնել և իրացնել իրենց կարողությունները, հմտությունները և հնարավորությունները, նպաստում են համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը, ընտանիքում ապրելուն, ինչպես նաև կանխարգելում են նրանց մուտք շուրջօրյա խնամքի հաստատություններ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Միջոցառում 76

Մշակել «Կանանց, խաղաղության և անվտանգության մասին» ՄԱԿ ի ԱԽ թիվ 1325 բանաձևի առնչությամբ միջոցառումների ազգային ծրագիր

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգմամբ միջգերատեսչական աշխատանքային խումբը մշակել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» թեմայով ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների

ազգային ծրագրի նախագիծը, որը հանրային քննարկումներից հետո կներկայացվի կառավարության հաստատմանը:

ՀՀ բնապահպանության նախարարություն

Միջոցառում 57

Շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջա-վայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Օրհուսի կոնվենցիայի կողմերի հանդիպման V/9A որոշմամբ և դրանից բխող Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կողմից՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետները երկարաձգելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 357-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ, համաձայն որի.

1. Որոշմամբ հանրությանն իրավունք է վերապահվել ներկայացնել ցանկացած դիտողություն և առաջարկություն, որը նրա կարծիքով առնչվում է հիմնադրույթային փաստաթղթին և նախատեսվող գործունեությանը:
2. Վերացվել են հանրության կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի առնելու սահմանափակումները:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Միջոցառում 46

Մշակել և ներդնել պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման մեխանիզմներ

Ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե (լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում) և օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

Կրթության և գիտության նախարարությունը մշակել և կառավարության հաստատմանն է ներկայացրել «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծ:

Կառավարությունից նախագիծը վերադարձվել է լրացուցիչ քննարկման: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացում, դպրոցահասակ երեխաների հաշվառման գործընթացի կանոնակարգում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բոլոր պատասխանատու կառույցների և շահագրգիռ մարմինների պարտավորությունների իրականացման ապահովում՝ երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկման գործընթացում:

Կրթության և գիտության նախարարութան կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման շրջանակներում ստեղծել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների հաշվառման» ենթածրագիր: Ենթածրագիրը հնարավորություն է տալիս վերահսկել դպրոցում արդեն ընդգրկված երեխաների տարբեր պատճառներով կրթությունից դուրս մնալու ռիսկերը, սակայն ի սկզբանե կրթության մեջ երեխաների չընդգրկվելը բացահայտելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսումնական տարվա թղթակցող տարում ծնված բոլոր երեխաների տվյալները:

2017-2018 ուսումնական տարում նախատեսվում է իրականացնել ենթածրագիր Լոռու մարզում, որի արդյունավետ իրականացմանը և հետագայում ՀՀ ողջ տարածքում ենթածրագրի ներդրմանը կնպաստի պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման օրենսդրական հիմքերի ստեղծումը:

Միջոցառում 48

Երաշխավորել որակյալ 12-ամյա միջնակարգ կրթության համընդհանուր մատչելիությունը, այդ թվում՝ հոսքային ուսուցման համընդհանուր հասանելիությունն ու մատչելիությունը, բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց բնակվելու վայրից, սեռից, սոցիալական կարգավիճակից, հաշմանդամությունից, կրոնից և այլ առանձնա-հատկություններից

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետը՝ «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1330-Ն որոշման մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր միջնակարգ (12-ամյա) կրթության իրականացման ապահովմանը:

Միևնույն ժամանակ, կրթության և գիտության նախարարի 2017 թվականի հունիսի 20-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» N 711-Ն հրամանով հաստատվել են հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական և ընդհանուր հոսքերի ուսումնական պլանները, որոնց համաձայն հանրակրթական առանձին գործող ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների 3-րդ աստիճանում իրականացվում է սովորողների նախասիրություններին և հակումներին համապատասխան հոսքային ուսուցում:

Միջոցառում 49

Մշակել միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմ

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևը խնդիրներ առաջացնում փոքր, թերկոմպլեկտավորված դպրոցների ծախսերի պլանավորման համար: Դասարանի փոքր միջին խտություն ունեցող դպրոցների համար պլանավորված միջոցները չեն համապատասխանում հանրակրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ կարիքներին: Նշված խնդիրների կարգավորման և հանրային միջոցների թափանցիկ, արդյունավետ և արդարացի բաշխման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված նախատեսվում է վերանայել դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևը:

Այդ նպատակով կրթության և գիտության նախարարության՝ 22.06.2018 թիվ 01/14/7430-18 գրությամբ, կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը: Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացվող քննարկումների ընթացքում, առաջարկվել է բանաձևում ներառել բաղադրիչ, որը կհստակեցնի ուսումնական հաստատություններին՝ ներառական կրթության իրականացման համար պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները: Այն կօժանդակի ներառական կրթության համակարգում առկա ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ծախսման, թափանցիկության, կրթության որակի հետ կապված խնդիրների հաղթահարմանը: Նախագիծը ներկայումս քննարկման փուլում է:

Միջոցառում 50

Մշակել պետական հան-րակրթական ուսում¬նական հաստատությունների մանկավարժական աշխատողների էթիկայի կանոններ՝ հաշվի առնելով Տոլեդոյի սկզբունքները

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Կրթության ոլորտի պատասխանատուների, ուսուցիչների մասնագիտական հանդիպում-սեմինարների շրջանակներում, հանձնարարվել է Թոլեդոյի ուղղորդող որոշ սկզբունքներ ներառել հանրակրթական դպրոցների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների ծրագրում: Թոլեդոյի ուղղորդող սկզբունքների առանձին ձեռնարկ չի տպագրվել ֆինանսական միջոցների բացակայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կրոնական դպրոցներ և կրոնական կրթության վերաբերյալ առարկաներ դասավանդող ուսուցիչներ ու կրթության ոլորտի պատասխանատուներ չլինելու պատճառով:

Միջոցառում 50

Մշակել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների էթիկայի կանոններ՝ հաշվի առնելով Տոլեդոյի սկզբունքները

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Կրթության ոլորտի պատասխանատուների, ուսուցիչների մասնագիտական հանդիպում-սեմինարների շրջանակներում, հանձնարարվել է Թոլեդոյի ուղղորդող որոշ սկզբունքներ ներառել հանրակրթական դպրոցների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների ծրագրում: Թոլեդոյի ուղղորդող սկզբունքների առանձին ձեռնարկ չի տպագրվել ֆինանսական միջոցների բացակայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կրոնական դպրոցներ և կրոնական կրթության վերաբերյալ առարկաներ դասավանդող ուսուցիչներ ու կրթության ոլորտի պատասխանատուներ չլինելու պատճառով:

Միջոցառում 51

ՀՀ օրենսդրությամբ ամրագրել հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման մարմինների կազմում շահերի բախումը բացառող դրույթներ

Ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե (լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում) օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

Կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 801-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմաբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ կետում ամրագրվել է, որ՝ «Դպրոցն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ, որը ձևավորվում է նախարարության սահմանած կարգով: Խորհրդի անհատական կազմը հաստատում է լիազորված մարմինը: Խորհրդի անդամ չի կարող առաջադրվել դպրոցի տնօրենի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) անձը:»: Դրույթը պարտադիր է բոլոր պետական հանրակրթական հաստատությունների համար:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Միջոցառում 59

Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություններ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

1. 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մշակվել և հունիսի 29-ի № 1/04/860-18 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2018-

2024 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

2. 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական աջակցության շրջանակում իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1) Մարտի 9-18-ը Հարավային Կորեայի Փյոն Չան քաղաքում կայացած ձմեռային պարալիմպիկ խաղերին մասնակցել է «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել մեկ մարզիկով (պատվիրակության կազմը՝ 5 հոգի): Դահուկավազք մարզաձևում (1 կմ սպրինտ) հանդես եկած մարզիկը 36 մասնակիցներից գրավել է 33-րդ տեղը:

2) Մայիսի 14-16-ը Երևանում անցկացվել է խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 13-րդ առաջնությունը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի 27 խուլ շախմատիստներ:

3) Հունիսի 21-ից մինչև հուլիսի 4-ը ներառյալ Երևանում անցկացվում է Հայաստանի կույր շախմատիստների տղամարդկանց անհատական եզրափակիչ առաջնությունը, որին մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող 10 կույր շախմատիստներ, ընդամենը՝ 14 մարդ (4 ուղեկցորդ):

3. Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ

Հունիսի 27-ին «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում: Միջոցառմանը մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող 50 սաներ:

ՀՀ պաշտպանության նախարարություն

Միջոցառում 28

Մշակել մեխանիզմներ զորակոչիկներին իրենց բժշկական զննության եզրակացության ակտի պարտադիր տրամադրման համար

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Միջոցառում 29

Սահմանել առողջական խնդիրների հիմքով վաղաժամկետ զորացրված անձանց փաստաթղթերի տրամադրման ողջամիտ ժամկետ

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաև առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը:

Միջոցառում 31

Ապահովել զորակոչիկներին իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մասին տեղեկացնելու մեխանիզմներ՝ մշակելով ծանուցագրի հետ միաժամանակ զորակոչիկներին զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու և այլ իրավունքները պարզաբանող հուշաթերթի տրամադրման կարգ

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

ՀՀ ՊՆ համապատասխան վարչությունների կողմից աշխատանքներ են իրականացվում հուշաթերթի մշակման ուղղությամբ: Ձևավորված է աշխատանքային խումբ: Հարկ է նշել, որ իրականացվող օրենսդրական բարեփոխումների շրջանակում մշակման փուլում են գտնվում մի շարք իրավական ակտեր, որոնց դրույթները ևս պետք է այս կամ այն չափով ներառվեն հուշաթերթիկի բովանդակության մեջ: Այս հանգամանքով է պայմանավորված կատարման առկա վիճակը:

Միջոցառում 32

Ստեղծել մեխանիզմներ կայազորային մեկուսարաններում մշտադիտարկում իրականացնող դիտորդական խմբի գործունեության համար՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջ-ները և միջազգային լավագույն փորձը

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Հաշվետվություն

Կատարման ընթացքում է, իրականացվում է ինչպես միջազգային, այնպես էլ տեղական այլ կառույցների փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա կմշակվեն ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանում մշտադիտարկում իրականացնող դիտողրդական խմբի գործունեության մեխանիզմները:

Միջոցառում 95

Իրականացնել Սիրիայի փախստականների կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրեր

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

1. «Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում» ծրագրի շրջանակում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

2018 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին տեղի են ունեցել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի» 2 նիստ, որտեղ քննարկվել են Սիրիայի փախստականներին ցուցաբերած աջակցության և նախատեսվող ծրագրերի, նրանց հետ տարվող աշխատանքների, սիրիահայերին իրավական և այլ աջակցության մասին հարցերը (ըստ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի ծառայությունից տրամադրված տվյալների 2012 թվականից սկսած փախստականի կարգավիճակ և ապաստան է ստացել 832 սիրիահայ):

Հաշվետու ժամանակահատվածում Սիրիայի փախստականներին բնակվարձերի փոխհատուցումն իրականացվել է համահայկական, բարեգործական, հասարակական և միջազգային կառույցների («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ՝ ՄԱԿ ՓԳՀ ֆինանսավորմամբ, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության) և անհատ բարերարների աջակցությամբ:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում սփյուռքի նախարարության մասնակցությամբ ԵՄ ֆինանսավորմամբ, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության, Շվեդիայի զբաղվածության ծառայության, Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից կազմակերպված «Համայնքային զարգացման համար ներդրումային համակարգի (ՀԶՆՀ) առցանց հարթակի» (iMigrantArmenia.EU) միջոցառումը:

Նախարարությունը մասնակցել և իր աջակցությունն է ցուցաբերել նաև մի շարք բարեգործական և բարեսիրական ծրագրերին («ՍՕՍ Մանկական Գյուղեր» «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Օքսֆամ» կազմակերպության և «ՕքսԵՋԵՆ» հիմնադրամի կողմից կազմակերպված ծրագրեր):

Հաշվետու ժամանակահատվածում Կառավարության աշխատակազմ է ներկայացվել նախարարության կողմից մշակված «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

2. Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցությանն ուղղված միջոցառումներ՝

Առողջական խնդիրների լուծման համար աջակցության խնդրանքով նախարարություն դիմած սիրիահայերին ցուցաբերվել է անհատական մոտեցում՝ իրականացնելով կարիքների ուսումնասիրում և գնահատում՝ նախքան պետպատվերում ընդգրկելու խնդրանքով ՀՀ առողջապահության նախարարություն գրավոր դիմելը:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում նախարարության միջնորդագրերի հիման վրա կատարվել են կորոնորոգրաֆիայի՝ 12, ստենտավորման՝ 4, շունտավորման՝ 2 վիրահատություններ: Նշված 18 փախստականներին մատուցված բուժծառայությունների մի մասը փոխհատուցվել է պետպատվերի շրջանակներում, մյուսը՝ ՀԲԸՄ-ի, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի (ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ), ինչպես նաև «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Իր գործունեությունը շարունակել է ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում գտնվող «Կլաուդիա Նազարյան» բժշկական կենտրոնը, որտեղ Սիրիայի փախստականները ստանում են անվճար բժշկական խորհրդատվություն՝ բժշկական կենտրոնում աշխատող սիրիահայ կամավոր բժիշկների կողմից:

Շարունակվել են «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի շրջանակներում ընթացիկ աշխատանքները և «Իզմիրլյան» հիմնադրամի ու բժշկական կենտրոնի հետ համագործակցությունը: 2018 թվականի առաջին կիսամյակում ծրագրի շրջանակներում տրամադրվող մի շարք բժշկական ծառայություններից օգտվել են ավելի քան 50 փախստականներ և ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը նշված ժամանակշրջանում կազմել են շուրջ 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված համապատասխան գրությունների հիման վրա ՀԲԸՄ-ն և Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը շարունակել են ֆինանսական աջակցություն տրամադրել սիրիահայերին՝ վերջիններիս առողջապահական խնդիրների լուծման նպատակով:

3. Սիրիահայերի տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ՝

Սփյուռքի նախարարությունը, որպես Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի անդամ և համակարգող, (ստեղծվել է տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) նախաձեռնությամբ 2016թ. ապրիլին), 2018 թվականի առաջին կիսամյակում մասնակցել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի նախաձեռնությամբ իրականացվող Հայաստանում Սիրիայի փախստականների տնտեսական ինտեգրման հարցերով աշխատանքային խմբի հանդիպումներին, որտեղ քննարկվել են ինտեգրման հետ կապված խնդիրները և դրանց լուծման ուղիները:

2018 թվականի ապրիլին «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի հետ համատեղ (ԵՄ ֆինանսավորմամբ) նախարարությունը կազմակերպել է Մայրության և գեղեցկության տոնին նվիրված «Սիրիա¬հայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով սիրիահայերի ձեռքի աշխատանքների և քաղցրավենիքի բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը, ինչպես նաև ապահովել է «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի աջակցությամբ մի խումբ փախստական ձեռագործ և հրուշակագործ կանանց (20 մարդ) մասնակցությունը Վրաստանում վրացահայ համայնքի կողմից կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին:

4. Սիրիահայերի խնդիրների հանրային իրազեկման, սոցիալական մշակութային և կրթական ծրագրերի շրջանակում իրականացված միջոցառումները՝

Նախարարությունը մասնակցել է տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիայի ծառայության կողմից նախաձեռնած «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց ինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի» շրջանակներում կազմակերպված առաջին հանդիպմանը, որտեղ քննարկվել են փախստականների առաջնահերթ խնդիրների լուծման անհրաժեշտությունը, նրանց ինտեգրման առանձնահատկությունները:

Նախարարությունը մասնակցել է նաև Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստերին, որտեղ հավանության է արժանացել «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության նոր ծրագիրը, որի շրջանակներում ֆինանսավորվելու է նաև սիրիահայ 50 երեխաների ամառային հանգիստը՝ կազմակերպության ղեկավարության հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն:

Շարունակվում է նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA Rule of Law Initiative) հայաստանյան ներկայացուցչության համագործակցությունը՝ Սիրիայից և այլ հակամարտության վայրերից Հայաստան տեղափոխված անձանց համար «Իրավաբանական աջակցություն տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» ծրագրով անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Քննարկումներ են կազմակերպվել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ-ի, Անարատ հղության հայ քույրերի միաբանության հայաստանյան մասնաճյուղի, «ԱՄՔՈՐ Հայաստան» կազմակերպության, «Իզմիրլյան» և AFAF հիմնադրամների ներկայացուցիչների հետ:

2018 թվականի նոյեմբերին նախատեսվում է 2018-2019 թթ. ուսումնական տարվա սիրիահայ ուսանողների ուսման վարձը փոխհատուցելու նպատակով պետական բյուջեից հատկացումներ, ինչպես նաև ուսման վարձավճարի փոխհատուցում մշտապես ՀԲԸՄ-ի, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության, «Սուրբ Սարգիս» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ի կատարումն որոշման N1 հավելվածի 95-րդ կետի նախարարությունը շարունակում է համագործակցել սիրիահայ փախստականների հիմնախնդիր¬ներով զբաղվող պետական մարմինների, համահայ¬կական, միջազգային կազմակերպությունների և հոգևոր կառույցների հետ, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ միասին համակարգում է այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի բաղադրիչների, ինչպես նաև շահառուների ընտրությունը: Բացի այդ նախարարությունը շարունակում է համագործակցությունը նաև սիրիահայերի կողմից Հայաստանում ստեղծված այլ՝ «Հալեպ» հայրենակցական

բարեսիրական, «Քեսաբ» հայրենակցական միավորում, «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունների հետ:

Հայաստան տեղափոխված սիրիահայերի համար և սիրիահայերի մասնակցությամբ իրականացված միջոցառումները լայնորեն լուսաբանվել են նախարարության պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում, «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում, հայաստանյան և սփյուռքյան լրատվական կայքերում:

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նախարարություն են դիմել 394 Սիրիայի փախստականներ, ովքեր ունեցել են տարբեր ոլորտներին առնչվող 402 խնդիրներ: Դրանցից բժշկական օգնության խնդրով աջակցություն ցուցաբերելու համար դիմել է 225 փախստական, աշխատանքի տեղավորման հարցով՝ 22, բնակվարձի փոխհատուցման աջակցության խնդրանքով՝ 34, կրթական հարցերով՝ 27, իրավական և այլ բնույթի հարցերով՝ 86 փախստական: Բոլոր դիմողներին ցուցաբերվել է համապատասխան օգնություն և օժանդակություն, ինչպես նաև տրվել են պարզաբանումներ:

96-րդ կետի համաձայն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատանքների թափանցիկությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հարցերը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումն ապահովելու նպատակով սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստերում «Սփյուռք» բաժնի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման շրջանակում քննարկվել է նախարարության կողմից կատարված աշխատանքները՝ Սիրիայի փախստականների կրթա¬կան, մշակութային, սոցիա¬լական, տնտեսա¬կան ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերով իրականացված միջոցառումները:

Միջոցառում 96

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներում քննարկել սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև համապատասխան նախարարության կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումներ

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատանքների թափանցիկությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հարցերը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումն ապահովելու նպատակով սփյուռքի նախարարին կից հասարակական խորհրդի նիստերում «Սփյուռք» բաժնի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման շրջանակում քննարկվել է նախարարության կողմից կատարված աշխատանքները՝ Սիրիայի փախստականների կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական ինտեգրման խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերով իրականացված միջոցառումները:

ՀՀ մշակույթի նախարարություն

Միջոցառում 96

ՀՀ նախարարին կից հասարակական խորհուրդներում քննարկել սույն գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև համապատասխան նախարարության կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված այլ միջոցառումներ

Ֆինանսավորման աղբյուրը՝ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

Հաշվետվություն

2018 թվականի առաջին կիսամյակում ՀՀ մշակույթի նախարարին կից հասարակական խորհրդի նիստ չի եղել:

Ծրագրերի թափանցիկության, քաղաքացիների հանդեպ անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերելու նպատակով ՀՀ մշակույթի նախարարի, նախարարի տեղակալների, ստորաբաժանումների ղեկավարների (աշխատակիցների) կողմից իրականացվել է 5034 քաղաքացու ընդունելություն:

ՀՀ Ոստիկանություն

Միջոցառում 13

Ոստիկանության ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ հավաքների ժամանակ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի, միջազգային լավագույն փորձի պատշաճ կիրառման վերաբերյալ

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում, համաձայն կազմված ուսումնական և առարկայական թեմատիկ պլանների, անցկացվել են հավաքների ժամանակ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի, միջազգային լավագույն փորձի պատշաճ կիրառման վերաբերյալ դասախոսություններ.

- 18.01.2018թ.-14.02.2018թ. ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության, հասարակական կարգի ապահովման և պրոֆիլակտիկայի միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /26 ծառայող/,
- 22.01.2018թ.-20.04.2018թ. ՀՀ ոստիկանությունում միջին խմբի պաշտոններում նոր նշանակված ծառայողների համար եռամսյա վերապատրաստման դասընթացներ/26 ծառայող/,
- 01.03.2018թ.-29.03.2018թ. ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության, հասարակական կարգի ապահովման և պրոֆիլակտիկայի միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /25 ծառայող/,
- 12.03.2018թ.-19.04.2018թ. և 19.03.2018թ.-18.04.2018թ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության և անչափահասների գործերով օպերատիվ ծառայողների համար /21 ծառայող/,
- 15.03.2018թ.-18.04.2018թ. ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /18 ծառայող/,
- 10.05.2018թ.-20.06.2018թ. և 11.06.2018թ.-26.06.2018թ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության և անչափահասների գործերով օպերատիվ ծառայողների համար /40 ծառայող/,

-16.05.2018թ.-13.06.2018թ. ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության, հասարակական կարգի ապահովման և պրոֆիլակտիկայի միջին խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /25 ծառայող/,

-07.06.2018թ.-15.06.2018թ. ՀՀ ոստիկանության շտաբի գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար /7 ծառայող/,

-17.04.2018թ.-20.07.2018թ. ՀՀ ոստիկանությունում միջին խմբի պաշտոններում նոր նշանակված ծառայողների համար եռամսյա վերապատրաստման դասընթացներ/25 ծառայող/:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Միջոցառում 58

Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգա-վորման պետական ծրագրերով աշխատաշու-կայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում:

Ֆինանսավորման աղբյուրը՝ օրենքով չարգելված այլ միջոցներ

Հաշվետվություն

2016 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 20-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության կողմից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ են ուղղորդվել աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող 43 անձիք, որոնց համար ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Արարատի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Երևանում հիմնադրամի փորձագետների կողմից տրամադրվել է ուսուցում և անհատական խորհրդատվություն: Ծրագրի արդյունքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի փորձագետների օգնությամբ կազմվել են գործարար ծրագրեր՝ Զբաղվածության պետական գործակալության կողմից դրամաշնորհային ծրագրում ընդգրկվելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ուղղված պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակներից է ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և

զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը: Նշված ծրագրում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձինք որպես թիրախային խումբ չեն առանձնացվում և աշխատաշուկայում անմրցունակ ու հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառումներ չեն նախատեսված: